ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ

ք. Երևան «15» 07 2022 թ.

«ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը», ի դեմս գլխավոր քարտուղար Ա.Երիցյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Արհովշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Գրիգորյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Հ-43, /Մ-2/ - Գնդեվազ - Ջերմուկ – Արցախի Հանրապետության սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-ում ջրահեռացման ապահովման, կմ0+900-ում փլուզված հատվածի և կմ18+250 – կմ18+360 նստվածքային հատվածի վերականգնման** աշխատանքները (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ **Սույն պայմանագիրը ուժի մեջ մտնելուց 60 օր հետո:**

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առնվազն **100 տոկոսը** կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին** Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝

վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 24 816 000 (քսանչորս միլիոն ութ հարյուր տասնվեց հազար) ՀՀ դրամ, որից 4 136 000 (չորս միլիոն մեկ հարյուր երեսունվեց հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը;

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայամանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.15 **Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:**

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3, ՀՀ կենտրոնական գանձապետարան ՀՀ 900011025823 ՀՎՀՀ 02815457 Գլխավոր քարտուղար՝ Ա. Երիցյան /ստորագրություն/ Կ.Տ	<<Արհովշին>> ՍՊԸ ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա համայնք, Մասիս-Ռանչպար խճ. 3 «Էվոկաբանկ» ՓԲԸ ՀՎՀՀ 00110978 ՀՀ 16600190188200 Տնօրեն՝ Մ. Գրիգորյան /ստորագրություն/ Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

Հավելված թիվ 1
«15» 07 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ ծածկագրով պայմանագրի

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Հ-43, /Մ-2/ - Գնդեվազ - Ջերմուկ – Արցախի Հանրապետության սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-ում ջրահեռացման ապահովման, կմ0+900-ում փլուզված հատվածի և կմ18+250 – կմ18+360 նստվածքային հատվածի վերականգնման աշխատանքների

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալ	Միավորի արժեքը	Ընդհանուր արժեքը	Ընդհանուր արժեքը (տոկոս)
1	2	3	4	5	6	7
	I ԿՄ18+250-18+360 նստվածքային հատվածի վերականգնման աշխատանքներ					
	1 Հողային աշխատանքներ					
1	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 0.65մ^3 շ.տ. բարձում ա/ի , տեղափոխում լցակույտ 1 կմ	մ^3	100	1,781	178,100	
2	նույնը ձեռքի աշխատանքով, բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. ա/ի , տեղափոխում լցակույտ 1 կմ	մ^3	16	7,58	121,280	
3	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ, բարձում էքս. 0,65մ3 շ. տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 1կմ	մ^3	100	1,875	187,500	
4	10e-IV կարգի բնահողի մշակում բուլդոզերով տեղափոխում 20մ լիցք (հարթեցում, ջրում, խտացում)	մ^3	74	1,024	75,776	
	Հողային պաստառի բնահողի փոխարինում					
1	Հողային պաստառի հարթեցում բուլդոզերով	մ^2	509	0,021	10,689	
2	Քարային լիցքի իրականացում $h_{միջ}$=80 սմ	մ^3	151	6,889	1040,239	
	2.Կողային առու					
1	10eIV կարգի բնահողի մշակում և բարձում էքս. 0.65մ^3 շ.տ. ա/ի վրա, տեղափոխում լցակույտ 1կմ	մ^3	200	1,849	369,800	
2	10eIV կարգի բնահողի մշակում ձեռքի աշխատանքով, բարձում էքս. 0.65մ3 շ.տ. ա/ի , տեղափոխում լցակույտ 1 կմ	մ^3	17	7,703	130,951	
	3 .Կողնակ					
1	Կողնակների լրացում ավազակոպճային նյութով $h_{միջ.}$=4սմ	մ^2	320	0,446	142,7200	
	4. Երթևեկելի մաս					
1	Ա/բ ծածկի ֆրեզում $h_{միջ}$=4սմ և վերադարձ սեփականատիրոջը	մ^2	180	0,919	165,420	

2	Ավազակոպճային շերտ h=10սմ	մ²	509	0,589	299,801	
3	Խճային հիմք h=15 սմ բիտումի տարածումով 4.12տ/ 1000 մ2	մ²	509	3,893	1981,537	
4	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	509	6,224	3168,016	
5	Մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	689	4,628	3188,692	
	5. Մետաղական խողովակ d=630մմ ԿՄ18+464 իջատեղում					
1	Հողային աշխատանքներ խողովակի փոսորակի փորման համար էքս.0,65 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ միջ.հեռ. վրա /հունի ուղղում/	մ³	19	1,849	35,131	
2	Հողային աշխատանքներ խողովակի փոսորակի փորման համար էքս. 0.65մ³ շ. տ. կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	16	0,798	12,768	
3	Ավազակոպճային նախապատրաստական շերտ խողովակի տակ h=10սմ	մ³	3,5	6,428	22,498	
4	Խճային նախապատրաստական շերտ գլխամասերի տակ h=10սմ	մ³	3,5	5,811	20,339	
5	Գլխամասի կառուցում միաձույլ բետոնից B20 F150					
	հիմք	մ³	3,2	126,119	403,581	
	իրան	մ³	2,2	126,119	277,462	
6	Մետաղական d=630մմx7մմ խողովակի տեղադրում	գծմ	15	173,246	2598,690	
7	Քսվածքային ջրամեկուսացում 2 շերտ տաք բիտումով					
	խողովակ d=630մմ	գծմ	14,2	4,011	56,956	
	բետոն	մ²	12,34	1,386	17,103	
8	Վաքի և հենակային ատամի B15 միաձույլ բետոն F100	մ³	2,6	86,675	225,355	
9	Հետադարձ լիցք					
	ա)բուլդոզերով	մ³	10	0,947	9,470	
	բ)ձեռքի աշխատանքով	մ³	6	2,035	12,210	
10	Ա/բետոնե ծածկի վերականգնում					
	ա)ավազակոպճային շերտ h=10սմ	մ³	18	0,56	10,080	
	բ)խճային հիմք h=15 սմ բիտումի տարածումով 4.12տ/ 1000 մ2	մ³	18	3,769	67,842	
	գ) մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	18	5,635	101,430	
	6.Արգելափակոց ԿՄ18+278-ԿՄ18+310					
1	Մետաղական արգելափակոցի ապամոնտաժում, վերատեղադրում	գծմ	32	6,19	198,080	
				Ընդամենը I	**15129,516**	**60,967%**
	II ԿՄ0+900-ում փլվածքի վերականգնում					
	1.Գաբիոնային շարվածք					
1	Փոսորակների փորում (10e - IV) էքս. 0,65մ³ շ.տ. Բարձ. ա/ի տեղափ. լցակույտ 1կմ	մ³	4	1,85	7,400	

2	Փոսորակների փորում ձեռքով (10e - IV) կողալցումով հետ լիցքի համար	մ³	13	5,945	77,285	
3	Հատակի համահարթեցման աշխատանքներ ձեռքով	մ²	10	0,405	4,05	
4	Ավազակոպճային հարթեցնող շերտ h=20 սմ	մ³	2	7,116	14,232	
5	Գաբիոնային շարվածք 1x1x0.5 (քար) : Հիմնակմախք d=6.5 մմ , 1գծմ=0.260 կգ, 1հատ=12.3գծմ 32հատ393.6 գծմ/102.336կգ Ցինկապատ ցանցը ամրակով d=3.0 մմ,1մ²=1.445 կգ, 1 հատ=4 մ2 32 հատ 128 մ²/184.96կգ Գաբիոններին կապող մետաղալար d=3.0մմ, 1հատ=1.2գծմ,1 հատ=0.066 կգ 321 հատ 2.112կգ Խարսխային ամրանային ձող d=18մմ,1գծմ=2.0կգ, 1հատ.=1.0մ 40հատ 80կգ	մ³	16	33,953	543,248	
6	Տեղում կուտակված գրունտով հետլիցք ձեռքով (հարթեցում ջրում խտացում):	մ³	13	2,035	26,455	
	2. Բ-1-20 վաքեր					
1	10e IV բնահողի քանդում ձեռքով , բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 1 կմ	մ³	25,12	7,703	193,499	
2	Ավազակոպճային շերտ h=10սմ (վաքերի տակ)	մ³	7,85	6,428	50,460	
3	Ե-1-20-50 վաքերի ջրամեկուսացում	մ²	152,29	1,386	211,074	
4	Ե-1-20-50 վաքերի տեղադրում	հատ	157	14,394	2259,858	
5	Փոսային նորոգում հիմքով ՝ Խիճ 8-16սմ բիտումի տարածումով 4.12տ/1000մ2, Մանրահատիկ ա/բ h=5սմ	մ²	23,5	10,048	236,128	
				Ընդամենը II	**3623,689**	**14,602%**
	III ԿՄ0+000-ում ջրահեռացում					
	1.Ե/բ d=1.0մ խողովակների տեղադրում ԿՄ0+025					
1	10e-IV փոսորակի փորում էքս. 0.65 մ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափ. լցակույտ 1կմ միջ.հեռ. վրա	մ³	66	1,849	122,034	
2	10e-IV փոսորակի փորում էքս. 0,65 մ³ կողքի վրա կուտակելով հետադարձ լիցքի համար	մ³	16	0,798	12,768	
3	Նույնը ձեռքով	մ³	6	2,035	12,21	
4	Ավազակոպճային նախապատրաստական շերտ	մ³	3,3	6,428	21,2124	
5	Խողովակների հիմքի բետոն	մ³	11,38	92,072	1047,779	
6	Ե/բ խողովակի օղակների տեղադրում, N13	հատ	18	119,292	2147,256	
7	Գլխամասի միաձույլ բետոն ելքում					
	- հիմք	մ³	2,2	126,119	277,462	
	իրան	մ³	2,6	126,119	327,909	
8	Քսվածքային ջրամեկուսացում					

	- գլխամաս	մ²	16,9	1,386	23,423	
	խողովակ	մ²	50,4	1,386	69,854	
9	Սոսնձային ջրամեկուսացում	մ²	18	5,6	100,800	
10	Ցեմենտային շաղախ	մ³	1,8	45	81,000	
11	Վաքի և հենակային ատամի միաձույլ բետոն B-15 F-100	մ³	1,2	86,675	104,010	
12	Քարային լիցք	մ³	1,5	6,889	10,334	
13	Հետադարձ լիցք					
	- բուլդոզերով	մ³	20	0,947	18,940	
	ձեռքով	մ³	2	2,035	4,070	
	2.Ընդունիչ միաձույլ բետոնե ջրհոր խողովակի մուտքում					
1	Հատակ	մ³	0,98	90,3128	88,507	
2	Պատեր	մ³	4,4	89,113	392,097	
3	Ջրհորի ջրամեկուսացում 2 շերտ բիտումով	մ²	12	1,86	22,320	
	3.Ա/բետոնե ծածկի վերականգնում					
1	ա)Խիճ բիտումի տարածումով 4.12տ/1000մ² h=15սմ	մ²	24	3,893	93,432	
2	բ)խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ²	24	6,224	149,376	
3	գ) մանրահատիկ ա/բ h=4սմ	մ²	24	4,628	111,072	
	4.Ջրհորի մետաղական ցանց շրջանակով	հատ	1	120,155	120,155	
				Ընդամենը III	**5358,021**	**21,591%**
				Ընդհանուրը	**24111,226**	
				Ընդամենը՝ չնախատեսված ծախսեր**	**704,774**	**2,840%**
				Ամբողջը*	**24816,000**	**100,000%**

**Արժեքը ներառում է բոլոր ծախսերը, ներառյալ «Շահույթը» և ԱԱՀ-ն՝ 20%*

*** Չնախատեսված աշխատանքների և ծախսերի համար պատվիրատուի կողմից կապալառուին տրամադրվող պահուստային միջոցները ենթակա են վճարման՝ վերջինիս կողմից հիմնավորող փաստաթղթերը (կատարողական ակտերի, հեղինակային և տեխնիկական հսկողություն իրականացնող անձերի եզրակացությունների առկայության) ներկայացվելու դեպքում:*

Հիմք՝ ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի N 879-Ն որոշման 8-րդ հավելված

Աշխատանքների առնվազն 75 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:
*Պայմանագրի կատարումը փուլային չէ և յուրաքանչյուր փուլի կատարումը ուղղակիորեն փոխկապակցված է պայմանագրով սահմանված պահանջներին համապատասխան ստացվելիք վերջնարդյունքի հետ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արհովշին>> ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա
համայնք, Մասիս-Ռանչպար խճ. 3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00110978
ՀՀ 16600190188200
Տնօրեն՝ Մ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 2
«15» 07 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ ծածկագրով պայմանագրի

ՀԱՎԵԼՎԱԾ 1
ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

No	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ	Աշխատանքների կատարման ժամկետը	
		սկիզբը	ավարտը
1	Լաբորատոր փորձարկումներ	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
ԿՄ18+250-18+360 նստվածքային հատվածի վերականգնման աշխատանքներ			
1	**Հողային աշխատանքներ**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 15 օր հետո
2	**Կողային առուների կառուցում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 20 օր հետո
3	**Երթևեկելի մասի կառուցում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո
4	**Մետաղական խողովակի տեղադրում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 25 օր հետո
5	**Կողնակների կառուցում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
6	**Արգելափակոցների վերատեղադրում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
ԿՄ0+900-ում փլվածքի վերականգնում			
1	**Գաբիոնների կառուցում**	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող	Ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող

		համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 30 օր հետո
2	**Ե/բ վաքերի տեղադրում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 35 օր հետո
3	**Փոսային նորագման աշխատանքներ**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 45 օր հետո
ԿՄ0+000-ում ջրահեռացում			
1	**Խողովակների տեղադրում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 40 օր հետո
2	**Միաձույլ ջրընդունիչ ջրհորի կառուցում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 50 օր հետո
3	**Ա/բ ծածկի վերականգնում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 55 օր հետո
4	**Ջրհորի մետաղական ցանցի իրականացում**	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց 60 օր հետո
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ		ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո	ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելուց **60 օր հետո**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արհովշին>> ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա
համայնք, Մասիս-Ռանչպար խճ. 3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00110978
ՀՀ 16600190188200
Տնօրեն՝ Մ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված N 3
2022 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

«15» 07
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2022 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45231177/519	Հ-43, /Մ-2/ - Գնդեվազ - Ջերմուկ – Արցախի Հանրապետության սահման հանրապետական նշանակության ավտոճանապարհի կմ0+000-ում ջրահեռացման ապահովման, կմ0+900-ում փլուզված հատվածի և կմ18+250 – կմ18+360 նստվածքային հատվածի վերականգնման աշխատանքներ	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	.. %	... %	... %	... %

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457
Գլխավոր քարտուղար՝
Ա. Երիցյան

/ստորագրություն/
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

<<Արհովշին>> ՍՊԸ
ՀՀ Արարատի մարզ, Սայաթ-Նովա
համայնք, Մասիս-Ռանչպար խճ. 3
«Էվոկաբանկ» ՓԲԸ
ՀՎՀՀ 00110978
ՀՀ 16600190188200
Տնօրեն՝ Մ. Գրիգորյան

/ստորագրություն/
Կ.Տ

Հավելված թիվ 4
« » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 4.1
« » 2022 թ. կնքված
ՏԿԵՆ-ԳՀԱՇՁԲ-2022/9Շ ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն